

շրջաններ ու Պոլիսը մանաւանդ, լայնօրէն իւրացուցած արեւմտեան գաղափարաբանութիւնը, ալ չէր սեղմուեր ըլլալու այն ձեւին մէջ, որով եղեր էին մեր պապերը, թուրքին հետ: Իմ մեծ հայրս թուրքէն չէր տառապեր: Բայց իր թողը աշխարհ մտաւ թուրքը ապրելով: Ձեմ գիտեր, պատմած եմ տեղ մը.– մանկութեանս ամէնէն հեռաւոր յուշը ծեծն է, զոր կերայ թուրք գիւղի մը բաղնիքին մէջ: Ես մօրս գիրկէն չէի բաժնուած տակաւին: Ու ինծի տարեկից մանչ մը զիս փոքր էր գետին: Մայրս չորցուց իմ կսկիծը, բայց չչորցուց անոր հետքը իմ լման կեանքիս վրայէն: Ի՞նչ ըրեր էի այդ տղուն:

Մեր յեղափոխականները անշուշտ ինծի պէս գիւղէ մը չէին գար: Անոնք գաղիացի էին, ռուս էին, գերման էին, անգլիացի էին: Բայց մեր ժողովուրդը՝ հիմնովին արեւելք: Ա՛ս էր, որ չկրցանք գգալ:

Պիտի գգուշանամ, որքան կարելի է, դատումներ բանաձեւել: Այսօրուան մեր հոգեվիճակը շարունակութիւնն է այդ օրերու գաղափարաբանութեանց: Շահուած:– Կայ կէտ մը, ատ ալ մեր գիտակցիլն է մեր պատրանքին: Ազգերու երջանկութեան, ազատութեան համայնապատկերներուն բոլորանուէր մեր յարումը հերքուեցաւ այն իսկ ազգերէն, որոնք ատոնց նարտարապետութիւնը դասախօսեր էին մեզի: Ու ի՞նչ սուղ վնասեցինք սա խեղճ փորձառութիւնն ալ, զոր լաւ կ'ընենք իրարու դէմ երբեք չմտածելով շահագործել: 900ին, գիտակից ոչ մէկ պատանի երկու կարծիք ունէր ազատութեան երազին դիմաց: Այսօր քննադատութիւնն է նակատը: Հիմա, մեր շլմորումին մէջ, մեր յիմարացումը մեզի մատչելի ընելու համար, իրար կը հարւածենք, խելքի տասնաբանեանք խորտակելով իրարու գլխին, իբր թէ մեր աղէտը հետեւանքն ըլլար այդ տախտակներէն մէկ քանիին: 1900ին, պատանիներս հեռու էինք նման սրբապիղծ մտածողութիւններէ:

Քսանէն վար էի ես այդ օրերուն ու նման այն հազարներուն, որոնք իմ գեղիս ու շրջանիս միւս գեղերուն մէջ կը վարանէին բաժնուիլ պատանութենէն, քանի որ ի–